



# Ղևոնդ Ալիշան

## Յուշիկք հայրենեաց Հայոց

Գերեղարձ Գ Լեւոնի

6 փետրուար – 1289

ՎԱՌԵՆՔ երեկոյեան խարոյկը, բոլորինք հայրենի կրակարանին եզերքը, ի Կիլիկիա, յարքունիս թագաւորին Հեթոյ: Հեթում (այս անունը կրողաց մէջ ամենէն անուանի եւ սիրելի անձն) Հեթում Ա, յաջորդ մեծին Լեւոնի, ինքնին հրաւեր կու տայ, եւ քան զորիշ տարիներ աւելի արտորանօք, իր հաւատարիմ հպատակացն եւ պարոնայցն, գալու ժողովելու բազմութեամբ, եւ Աստուածայայտնութեան մեծ տօնը կատարելու: Կու փութան իշխանք եւ պարոնայք՝ ապահովցընել իրենց ամուր բերդերը եւ իջնել լեռներէն, ելլել պարսպապատ քաղաքներէն եւ ժողովիլ ի Մսիս: ... Եւ ինչու՞ ոչ ի Միս, յաթոնն թագաւորաց: Մի՛ հարցընէք: Պարոնայքն գալու եւ անցնելու ատեն՝ կու նային մէկ մը այն մայրաքաղաքին կողմը, եւ դեռ եգիպտական սեւ ծխոյն նշանը տեսնելով, գլուխնին շարժելով՝ երեսնին խաչակնքելով կու փոխեն ճամբանին, թէ եւ շատ դժար կուգայ իրենց յառաջելն, վախնալով թագաւորին տխրամած դէմքը տեսնել . սակայն մէկ մ'այլ իրենց հրաւերքն թողթերուն վրայ նայելով, եւ տեսնելով անոնց արքունի կարմիրկապ կնիքը՝ սիրտ կ'առնուն, եւ կու մտնեն ի Մսիս . որոշեալ օրը՝ նախ քան զտօնն կու ներկայանան միաբան, արեւել եւ շնորհաւորել թագաւորին գնոր տարին եւ զաւագ տօները:

Միրով եւ պատուով կ'ընդունի գնուսա թագաւորն, եւ փոխարէն ողջոյններ տալով՝ կու հրամմէ որ նստին . եւ նախ ինքն կու բազմի ծանրութեամբ իր գահը: Ո՛հ,

ո՛րչափ այլափոխուեր է թագաւորին դէմքն քան զանցեալ տարին: Տարի մը միայն կրնա՛ր այդքան աւելցընել հազի վաթսնամեայ գլխոյն ալիքը, որ ոսկի պսակին տակէն կախուած՝ իր սպիտակ արքունի բեհեզեայ քղամդին կու խառնուին . եւ երկընցած դէմքն այլ այն գլխուն դեղին թագին կու նմանցընեն: Ո՛րչափ տարբեր էր այդ դէմքն այն Հեթում թագաւորի ոսկեհատիկ վառվռուն կերպարանքէն, երբ այդպիսի հանդիսական օր մը բարձր գահուն վրայ ելած ատեն: Կիւիկիոյ ամենէն ազնիւ ծնունդն՝ տիկնաց տիկինն Չապել, դուստրն մեծին Լեւոնի, անոր աջ կողմը կու բազմէր, այն իր կենակից եւ թագակից դշխոյն, գահուն բոլորը բռնէին իր հինգ վեհակերպ մեծապատիւ եղբարքն, Սմբատ գունդըստապլն՝ հին Հայկազանց եւ Վարդանանց նախանձորդ՝ սպարապետն Հայոց, Լեւոն՝ մեծ մարաշախտն, Լիկոս՝ գայլանուն կտրիճն: Բարսեղ՝ վսեմափայլ արքեպիսկոպոսն եւ առաջնորդ Դրագարկու, եւ Յովհաննէս՝ երիտասարդ արքեպիսկոպոսն Մամեստիոյ եւ առաջնորդ Արքայկաղնոյ, գահուն ստորոտը Սողոմոնի սուտ առիծներուն տեղ՝ երկու եռանդուն կրակոտ կորիւնք կենային՝ Լեւոն եւ Թորոս թագաւորորդիք . եւ իբրեւ ամենուն հովանի՝ թագաւորին ձախ կողմը նստէր փառօք իր ջոջգլուխ արքայահայրն՝ Մոզոնն Կոստանդին, աբրահամեան ծերունին:

Այդ յիշեալ մեծափայլ եւ մեծագօր արքունական սիւներն՝ այսօր խորտակած կ'երեւին ժամանակի օրէնքէն . միայն ամենէն կրտսեր արքայ եղբայրն Յովհաննէս արքեպիսկոպոս՝ մէկդին բազմէր, մէկալ դին այլ ամենէն մեծն՝ ծերունագարդ սպարապետն Սմբատ, ոսկէկոթ թրին վրայ կոթնած, երբեմն երբեմն թաւ թաւ յուներուն տակէն երկու խոր կայծակներ պտըտցնելով: Թագաւորին գլխուն այլ ծանրացեալ կ'երեւի գրեթէ կէս դար կրած թագէն . 43 երկայնեւ բազմափորձ տարիներ պէսպէս գոհար քարերու պէս շարուած էին անոր վրան . ո՛րչափ զանազան տեղուանք, ո՛րչափ զանազան անձանց մէջ կանգներ էր Հեթում այն գլուխը, ո՛րքան երկայն եւ տարետր ճամբաներ ընելով՝ Կիւիկիոյ դռներէն մինչեւ Թաթարըստանի խորագոյն անապատները՝ ազգին եւ տանը համար քրտնելով, կ'իմանայր հիմա պսակին ծանրութիւնը: Եւ թերեւս անկէ ետեւ փափագելի էր իրեն հանգչեցընել այն յօգնած գլուխը, ըլլա՛ր նաեւ սեւ քարի մը վրայ: ... Բայց սրտին վրայ այլ կայ ծանրութիւն մը, եւ շատ մեծ ծանրութիւն . ինչուան որ զայն չթեթեցընէ, իրեն համար մահն անգամ անհանգիստ է: ...

Աստուծո՞ւմը մտածութիւններն չեն, այլ այն բազմախումբ պարուններուն՝ որք բազմեր են թագաւորին դիմաց: Իսկ Հեթում իբրեւ թեթեւ քնէ մը թօթուելով գլուխը, եւ ծածուկ կրակով մը վառելով աշուրները՝ կու դարձնէ հոն եղող իշխանաց վրայ, եւ յետոյ կու հրամէ սենեկապան սպասաւորաց՝ որ պակասներն այլ կանչեն եւ նստեցնեն . իսկ սպասաւորք կարգէն պակաս չգտնելով՝ կ'իմացնեն որ ամենքն այլ հոն են: Թագաւորն նորէն աչք դարձնելով՝ կու տեսնէ, թէ ոչ շատ, այլ մե՛ծ պակաս . կու հրամմէ կու ստիպէ որ գանոնք այլ կանչեն: Սպասաւորք շփոթած կու նային կու համրեն, պակաս չեն գտներ, եւ վախով մօտենալով կ'ըսեն, Սուրբ թագաւոր, ամենքն հոս են: Թագաւորն նեղանայ, սպասաւորք իրար կ'անցնին, իշխանաց կու դառնան . աստուծո՞ւմը այլ կ'ապահովցնեն զթագաւորը, թէ Սուրբ թագաւոր, ամենքն այլ որոց հրաւերք եւ պատուէր խարեցիք, հոս են, անգամ մ'այլ սրափայլ աչքերը չորս դին դարձնելով, եւ բարկացեալ՝ այլ մարմնած եւ հեծկլտած ձայնով կանչէ . Եթէ ամենքն հոս են, ու՞ր են հապա պարոնաց պարոնքն . Լեւո՛ն եւ Թորո՛ս: ...

Լեւո՛ն եւ Թորո՛ս, երկու կրակէ նետերու պէս թռան այս անուանքս թագաւոր հօր մը բերնէն, եւ շմնաց ողջ սիրտ մը . իշխան, պարոն, եպիսկոպոս, ձիաւոր, սպասաւոր, ամենքն վիրաւոր հառաչանք մը փրցնելով կու սկսին լալ վայել, երկինքն երկիր նայիլ . բոլոր արքունական ատեան նոր մեռած անդրանիկ գաւկի մը սգասենեակ դարձաւ . թագաւորն ծածկեց հայրական դէմքն իր սպիտակ բեհեզին տակ . եւ մէկն չէր համարձակեր մօտենալ, բան մը ըսել, մխիթարանք մը տալ, պարոնաց գլուխն ի գետին կորացեալ . վարդապետաց եւ եպիսկոպոսաց շրթունքն գալով համրացեալ, կ'ուզէին որ եղածն երագ ըլլար . եւ թէ չէր կարելի անկէ հեռանալու՝ գոնէ անզգայ ըլլալու: Բայց ո՞վ կրնայ անզգայ ըլլալ, երբ ձիաւորաց պարծանքն՝ գուարթունն Թորոս՝ դեռ իր չորեքամսեայ գերեզմանին մէջ սեւ սեւ վերքերու նշաններով ահեղ դիւցազին նման պառկած կ'երեւէր դիմացնին... եւ երբ սաղէմ թագաժառանգն Լեւոն՝ բարբարոս Պիլպարս սուլտանին սեւ բերդին մէջ շղթայակապ տանջուէր: Անվախ Սմբատն անգամ, հօրեղբայր սիրուն եւ կտրիճ կորեանցն, ձեռքը թրին, թեւն ի գահ թագաւորին կոթընած՝ արտասուաթափ աչքերը վերուցած ատեն՝ կարծուէր թէ մէկէն պիտի ցատքէ եւ արքունի նիզակներէն մէկը կորզած՝ վազէ երթայ Մսրայ սուլտանին գահը կոխէ, եւ իր եղօրորդին՝ պարոն Լեւոնը, յափշտակէ բերէ հօրը գիրկը, իսկ երբ գլուխը թօթուելով նորէն դէպ ի կուրծքը կ'իջեցնէր, կարծուէր թէ աշխարհք

անցեր է Հայոց տանն համար . եւ ամենքն ալ գլխակոր մնային... Թանձր սուգ մը պատեր էր Հեթոնյ արքունիք, արեւելքէ եւ արեւմուտքէ, Թաթար դանէն եւ սրբազան Պապէն եկած մխիթարութեան գրերն անգամ չէին փարատած զայն:

Ի՞նչպէս եկաւ այն սեւ սուգն, ի՞նչպէս եղաւ այս չար դիպումն: Գիտես Հայկակ, որ Կիլիկիա թէ եւ ամուր երկիր, բայց այլազգի տէրութիւններու դրացի էր, որք կ'ուզէին յափշտակել այն պատուական աշխարհը: Թագաւորք Հայոց երբեմն բարեկամութեամբ, երբեմն զենքով կու գգուշանային անոնցմէ . որոց գորաւորագոյնն՝ Իկոնիոյ սուլդանն, շատ հեզ Լեւոնի եւ Հեթոնյ հետ կռուել էր, երբեմն մէկն երբեմն մէկայլն յաղթելով, բոլորովին ապահովութեան համար՝ Հեթում նախ իր եղբայրը՝ Սմբատը՝ դրկեց առ դանն Թաթարաց, յետոյ ինքնին գնաց առ Ապաղա դան, եւ երեք չորս տարի ուշացաւոտարութեան, մեծագոր եւ ահարկու շէլակի դանէն ստիպուեցաւ նիզակակից ըլլալ անոր, Արաբացոց եւ Թուրքաց դէմ շատ պատերազմներ ընել, եւ Բաղդատ առնուլ, ու բոլոր Պարսից, Միջագետաց, Ասորեստանի, Հայոց՝ Ասորոց իշխանները նուաճել . որով իր սահմաններն այլ ազատ եւ հանգիստ մնացին շատ տարի . ուրիշ գորաւոր թշնամի չկար, բայց միայն Մարայ սուլդանն, որ հեռուէն կու սպառնար, իսկ Հեթում մէկ կողմէն երկիրը պարիսպներով եւ բերդով ամրացուցեր, մէկայլ կողմէն թաթարաց օգնութեան վրայ վստահացեր էր, եւ այլ աւելի իր խորագէտ հօրը խրատուց եւ եղբօրը քաջակռիւ բազկին վրայ: Բաղդատ առնելու ատեն Եգիպտոսի սուլդանին կողմանէ այլ մարդ կար հոն, օգնական խալիֆային . ասոնցմէ երկուքն կրցան փախչիլ . մէկն էր Ֆունտուքտար Պիյաարս, չափաւոր տարիքը առած, մէկ այլն երիտասարդ մը Սօնդօր էլ Աչքար (շէկ կամ կարմիր բազայ) անուամբ, որ իրեի պէս կտրիճ վագուկ ձի մը ունէր . եւ տեսնելով ընկերին թէ հասակը թէ գէշ ձիւն՝ վախցաւ թէ գերի ընկնի սպաննուի . ստիպեց որ իր ձիուն վրայ հեծնի եւ փախչի: Թէ որ ես գերի ընկնիմ, կ'ըսէր, աղայութեանս խնայելով՝ զիս չեն սպաններ . քու պարտքդ ըլլայ ազատել զիս: Եւ նման այնպէս եղաւ . կարմիր բազայն բռնուեցաւ: Պիյաարս պրծաւ եւ հասաւ յԵգիպտոս յորդորեց անոր Քուդդուղ սուլդանը՝ Թաթարաց դէմ պատերազմ բանալու, եւ պատերազմին մէջ այլ շատ քաջութիւն ըրաւ, անոր համար վարձք ուզեց Հալէպի կուսակալութիւնը . եւ երբ սուլդանն չտուաւ: Պիյաարս համախտհութեամբ քանի մը իշխանաց սպաննեց գնա եւ տեղը անցաւ (1260ին): Անկէ ետեւ գլխաւոր մտածութիւնն էր վրէժ առնուլ ի Թաթարաց եւ անոնց օգնականներէն, յարմար

ատիթ այլ գտաւ Հէլակիւ եւ Պերքայի՝ մեծ դաներուն ազգային կոիւները . որոնցմէ յաղթուող եւ փախչողները կ'ընդունէր իր քով: Անոր համար Հէլակիւ պատուիրեց Հեթմոյ՝ իր նիգակակցին, որ Եգիպտոսի սուլդանին վրայ յարձըկի:

Հեթում խորագիտութեամբ նախ Իկոնիոյ սուլդանին հետ դաշնադրութիւն ըրաւ (1262), յետոյ վազեց Այնթապայ վրայ . բայց Պիլյաարս առաջուց իմանալով ըլլալիքը՝ շատ զօրք խաւրեց խափանեց Հեթմոյ խորհուրդը . այն ատեն Հեթում քանի մը հարիւր մարդ այլ ի Թաթարաց առնըլով եւ 150 ասպետ անտիոքացի, մտաւ Ասորոց երկիրը, բայց ցուրտէն ստիպուեցաւ յետ քաշուիլ, մանաւանդ որ Պիլյաարս կու գար իր երկրին սահմանները կոխելու: Անկէ ետեւ սկսան մէկմէկու դէմ պատրաստուիլ սուլդանն Մսրայ եւ թագաւորն Հայոց, եւ զիրար հնազանդութեան կանչել, թէ եւ իրարմէ կու վախէին . բայց երբ Հէլակիւ պաշտպանն Հեթմոյ եւ քրիստոնէից՝ մեռաւ (ի սկիզբն 1265 տարոյ): Պիլյաարս սկսաւ համարձակ յառաջ գալ: Նախ խաչակրաց ձեռքէն առաւ ամուր քաղաքները, վերջը պահանջեց ի Հեթմոյ՝ որ Ասորոց դռները ազատ թողու իր մարդկանց անցնելու, չարգիլէ իր երկրէն ցորեն բերելու, եւ նաեւ իրեն հարկ տայ: Հեթում պատասխան չտուաւ անոր . թէ եւ դէմ կենալու չէր համարձակեր, բայց եւ ոչ այլ դաշնագրութիւն ընել, Թաթարներէն ակնածելով, վասն զի թշնամիք էին Եգիպտացոց: Ահա այսպիսի դժար դէպքեր կան վարչութեան մէջ, որ փոքր տէրութեանց (ինչպէս էր Կիլիկեցոց) հնարքը անհնար կ'ընեն: Պիլյաարսայ ուզածն այլ աս էր, հրաման տուաւ Համադի էլ – Մանսուր իշխանին եւ Գալափուն զօրավարին եւ ուրիշներու, (որոց մէկը Սմլմօթ կ'անուանեն մեր պատմիչք), յարձակիլ ի Կիլիկիա, ուր եւ մտան օգոստոս ամսոյն սկիզբները 1266 ին: Հեթում առաջուց լեռները բերդերով եւ պահապաններով ամրացուցեր էր, եւ Եգիպտացոց շարժումքը լսելուն պէս՝ ունեցած զօրքը տուաւ իր երկու կտրիճ կորիւններուն, թագաժառանգ Լեւոնի՝ որ այն ատեն երեսնամեայ էր, եւ քաջ ձիաթափ Թորոսի՝ որ աւելի ծաղկահասակ էր, 'եւ երկուքն միատեղ քանի մը տարի առաջ (1260) ասպետ կարգեր էր, պատուիրեց անոնց որ ծովեզերքի եւ լեռանց միջոցը՝ Աղեքսանդրիոյ (Իսթէնտէրունի) քովի բռնակապանը պահեն: Իսկ ինքն՝ իրմէ աղէկ դեսպան չգտնելով՝ սիրտ ի բերան առած փութացաւ պզտի գնդով մը գնաց Թաթարաց զօրավետին, որ Էլպօստանի եւ Կոկիսոնի մէջ տեղ բանակեր էր, եւ օգնութիւն խնդրեց շուտով, բայց որչափ աղաչեց, մօտակայ վտանգը առաջ դրաւ, որչափ որ իր անգին գաւակացը վրայ կասկածոտ հօր մը

սիրտ կրնար խօսիլ եւ ջանալ, անօգուտ եղաւ, Թաթարն յամառեալ կ'ըսէր թէ առանց հրամանի Էլ դանին՝ Ապաղայի՝ չեն կրնար մարդ տալ: Ուրիշ ճար չկար, պէտք էր սուրհանդակ խաւրել դանին՝ եւ խաւրեց . բայց սուրհանդակն այլ պէտք էր կամ հայր ըլլալ կամ թռչուն, որ քիչ օրուան մէջ կարենայ կտրել բոլոր Փոքր եւ Մեծ Հայոց լայնութիւնը, եւ սրանալ ինչուան Մագանդարանի մօտերը, ուր գտուէր դանն, հրամանն առնուլ եւ բերել թաթար գօրապետին: Արդեօք սպասէ՝ չեթում սուրհանդակին դատնալուն, բայց միթէ անգութ եւ ճարտար թշնամին այլ անշարժ կու սպասէ՞ իր տեղը . արդեօք դառնա՞յ թռչի՞ յօգնութիւն գաւկնէրուն . բայց եթէ ինքն անկէ հեռանայ՝ Թաթարներն թերեւս տեղերնէն այլ չեն չարժիր օգնութեան գալու: Այս դժուարութիւնս առաջինէն ծանր էր . հարկ էր չեթոյ հոն սպասել 15 ատուր չափ, բայց իր քաշած երկայն համբերութիւնը՝ ո՞վ կրնայ չափել . ո՞վ կրնայ կշռել սրտին ալէկոծութիւնը այնպիսի ատեն, որ յիրաւի բաւական էր չեթոյ, թէ եւ սեւ այլ ըլլային՝ մագերը ճերմըկցընել, եւ օրուան տեղ՝ տարի մը ծանրացընել հասակին վրայ:

Իսկ թագաւորորդիքն ի՞նչ կ'ընեն: Ամառուան ամենէն տաք օրերուն, որ Կիւիկիոյ քարուտ կողերէն կրակ կու բոխէն դաշտերուն վրայ, մինչդեռ մերձակայ վանքեր Ս . Աստուածածնի Վերափոխման տօնը հոչակէին լեռնէ լեռ ձորէ ձոր, իրենք հոն կեցեր այրելով մրկելով կու սպասէին հօրերնուն, եւ թշնամոյն, եւ ետքինս աւելի շուտ հասաւ չկարծած կողմերէն: Իրենց կոթընած լերանց վրայ չեթում աշտարակներ կանգներ եւ պահապան գրեր էր զգուշութեան . եւ ոչ ոք կարծէր թէ մէկն այնպիսի տեղէ անցնելու փորձ փորձէ, բայց Պիյպարս իր գօրաց 15 20օր միայն միջոց կտրէր էր Կիւիկիա ասպատակելու եւ կրցածնուն չափ աւերելու, պէտք էր որ ամեն ջանք ընեն, եւ ահա յանկարծ Իսքէնտէրունի լեռներուն գլխէն, սեւ մրրկի պէս սկսան վար թափիլ Եգիպտոսի հնոցանման տաք օդուն վարժող Քէօլէմէններ, որ լցին վարի դաշտը: Հայք (ինչպէս շատ հեղ այսպիսի ատեն կու հանդիպի) յանկարծութենէն շփոթուած իրար անցան . տասն եւ երկու մեծ իշխան կար մէջերնին, ոմանք գարնուեցան, ոմանք փախան, ոմանք բռնուեցան, հոն էր եւ արքայ եղբայր գունդըստապլն Սմբատ եւ իր կտրիճ գաւկըներն Լեւոնեւ չեթում . հոն իր մէկ եղբայրն այլ (Լիկոս), որ նոյնպէս իր թագաւոր եղբոր որդուցը պաշտպանութեան համար պատերազմելով՝ փառօք ընկաւ զէնքն ի ձեռքը . իսկ Սմբատայ այս փառքս չտրուեցաւ այս անգամ, այլ պահուած էր ուրիշ պատերազմի . իսկ հիմա պէտք էր Հայոց բանակին մնացորդը՝ բոլորովին

կոտորածէն ապրեցընել: Ի՞նչ ջանք չըրաւ արդեօք այն առիծ դարձած սոսկալի սպարապետն՝ իր եղբօր կորիւնները ազատելու, որոնք հոն իրմէ աւելի իրենց հօր պատուէրքին, եւ անկէ այլ աւելի՝ իրենց քաջասրտութեանը ուզեցին լսել: Սմբատ չէր գիտեր՝ մնացեալ գօրա՞ց առաջնորդել, թէ անոնց քովը կենալ . եթէ անոնց յամառ քաջութեանը նայելով քովերնին կենար, անշուշտ Հայոց բանակէն մարդ մը պիտի չազատէր . ապա՝ մէկ մը մնացեալ իշխանորդիները եւ գօրքը ապահովապէս ետ կու քաշէր, մէկ մ'այլ արքայորդոց կու վազէր: Բայց որո՞ն հասնի . Լեւոն՝ Սարուանդի քար բերդին ոտքը կեցեր, Թորոս իրմէ շատ հեռու կու կռուէր . Լեւոն կու ջանայ հօրեղբօրն հետ պաշտպանել իրեններուն, Թորոս անդադար առաջ առաջ կու նետուի իր բարձրապինջ բարձրափոփնջ ձիովը, կու գարնէ կու կոտորէ գթշնամին: Մենք Իլիոնի դաշտը չենք տեսած, եւ ոչ գեկտոր՝ Տրովայ պարիսպներէն դուրս Աքիլիսի դէմ պատրաստուած, եւ ոչ անոր ծերունի հօրն եւ մօր եւ կնոջ աղաչանքը լսած, զինքը այն սոսկալի հսկային անյաղթելի զէնքերէն յետ կեցընելու . բայց Թորոսի համար կրնա՞ր պակաս ըսել Հայ Հոմեր մը, եթէ Հոմերի կէս հոգին այլ ունենար: Քանի մը հաւատարիմ զինակիրներով միայն մահու շրջանակի մը մէջ ցատքըտելով իր բարձրավիզ ձիովն եւ սեաւ փոթորիկի պէս չորս դի մրրկելով՝ բոլոր ծաղկեալ երիտասարդութեան ուժովը, կէս գունդ մը ձեւացընէր . վահանը թողած՝ թուր ու նիզակ էր շարժածը, որոնց հարուածէն՝ անտառահար փայտից պէս անթիւնք փռուեցան բոլորսիքը, ինչուան տասն հազար եգիպտացի սպաննեցին, կ'ըսեն, այն օր այդպիսի կտրիճ Հայք: Թորոս դեռ աշուրներն արիւն դարձած ամեն դի արիւն կու տեսնէր, արիւն կու հանէր, տուած եւ առած վերքը շիմանալով, շատերն իրեն յորդոր եւ ձայն տուին: Հերիք է, թագտրորդի, յետ դարձիր . բայց ոչ մէկուն այլ չլսեց . չլսեց անշուշտ մերձաւոր ընտանեաց գթոյն, եւ ոչ իսկ հեռաւոր հօր մը ծածուկ ձայնին . ,Շատ է ազնիւ որդեակ իմ Թորոս, Թորոս՝ դարձիր այս անգամ, մինչեւ գայ հայրդ այլ եւ մէկտեղ վրէժ առնունք»: Չլսեց այն ձայներուն, այլ այն մարդակոտոր սեւ անտառին մէջ մինակ մնացած բարձրաձաղկ ծառոյ մը պէս՝ դեռ ճոնչալով չէր դադրեր իր հարուածներէն, մինչեւ բազմութիւն սուսերաւոր թշնամեաց երթալով մօտենային, եւ շատ անգամ հարցընէին . Սոսկալի կտրիճ, ո՞վ ես դու, ի՞նչ կ'ուզես . քու բոլոր բանակիդ չըրածն՝ դու՞ն միայն կ'ուզես ընել . ձգէ՛ անկուշտ զէնքերդ եւ եկու ապրէ քաջի պէս մեր ձեռքը: Թորոս՝ միայն գանոնք գարնելով պատասխան կու տար, մինչեւ քանի մը անգամ անձնատոր ըլլալու յորդորելէն եւ օգուտ չըլլալէն ետեւ՝ կատղած սուսերաւորքն մօտեցան

պատեցին այն մէկ հատիկ վարսաւոր ծառը, ձիաւոր նահատակը, որ գրեթէ անոնց բազմութենէն խրդդուելով՝ եւ իրմէ առաջ վիրաւորած ձիուն կոնըկէն վայր ընկնալով՝ կոտորած նիզակին վրայ երես ի վայր փռուեցաւ երկա՛յն, յետին անգամ հայրենեաց հողը համբուրելու շնչակտուր շրթունքովը... Կողոպտողք արիւնլուայ գրահիցն՝ ինացան, բայց ափսո՛ւս, քիչ մ՛ուշ, որ Հայոց թագաւորին որդին է եղեր կտրիճն այն . ապա թէ ոչ՝ գուցէ աստուածորդի այլ կարծուէր դիւցատիպ Թորոսն այն: Ոչ պակաս անկէ քաջութեամբ կռուէր եւ Լեւոն, նոյնպէս կռուեցան եւ իրենց հօր եղբօրորդիքն, Սմբատայ կորիւնքն, որոնց մէկն այլ մեռաւ, մէկայլքն՝ Լեւոնի եւ իր հաւատարիմ ճորտերուն հետ՝ գերի ընկան թշնամեաց ձեռքը:

Ո՞վ կրնայ պատմել անգութ Պիյպարսայ ուրախութիւնը՝ երբ դիմացը հանեցին գանոնք, յետ 20 որ Կիլիկիոյ մէկ մասը արելէն եւ այրելէն եւ մայրաքաղաքն այլ կողոպտելէն, թագաւորաց գերեզմանները քակելէն եւ գանձերը պարպելէն, (որոց միայն մէկ ամանէն 60,000 կարմիր (ոսկի) հաներ էին), դառնալով անբաւ աւարով, մինչեւ մէկ եզ մը երկու դրամի կու ծախելին...

Իսկ Հեթում մինչեւ ցե՞րք կ'ուշանայ, մանաւանդ թէ մինչեւ ցե՞րք կու դանդաղին Թաթարք... Ահա կու դառնայ սուրհանդակն յԱպաղա դանէն՝ բերելով առ զօրավարն Թաթարաց հրաման օգնելու Հայոց: Հեթում թաթար գունդը առած՝ գացածէն աւելի շուտով կու կտրէ օրերով երկայն ճամբան . կու մտնէ իր երկիրը... Ընտանի լռութիւն եւ օտար աղաղակ, սեւ նշաններ, աւերակաց փոշի, այրածներու ծուխք, ամեն բան իրեն կ'իմացընեն, դեռ կու տեսնէ Եզիպտացոց վերջամնացները՝ որք իրմէ երկու օր առաջ էլեր էին երկրէն, եւ դեռ կու լսէ անոնց քամահանքը եւ աշխարհին հառաչանքը, կ'իմանայ, կու զգայ Լեւոնի գերութիւնը, Թորոսի մահը:

Եթէ ամեն բանէ վեր կրօնքի ոյժը չզգար Հեթում, չեն գիտեր արդեօք ի՞նչ կ'ըլլար կամ ի՞նչ կ'ընէր . բայց այս ուժով միայն սիրտը բռնելով, եւ այլ ամեն բան թողլով, գլուխը կու դարձնէ դէպ իր քաջայիշատակ աներոջ շինած վանքը, եւ հոն այն մեծ թագաւորին (Լեւոնի) գերեզմանին վրայ ընկնալով եւ սուրբ վանականաց հոգէխօս մխիթարանքը լսելով՝ հագիւ կրնայ քիչ մը զսպել զինքը . ,Բայց զսիրտն (կ'ըսէ ականատես պատմիչն) ինքն եւ Աստուած միայն գիտէին թէ որպիսի՞ կրակով լցեալ էր . զի ոչ տեսանէր զայնպիսի գեղեցկապատկեր եւ զծաղկալից



որդիսն իր առաջի իր . ոչ յերեկոյ եւ ոչ ի վաղիւն, եւ ոչ ի ժամ ճաշոյն՝ յուտել եւ ընպել . եւ ընդ միտ ածեալ զանմխիթար աղէտս գեղեցիկ որդւոցն, զԹորոսի գեղեցիկ պատկերն եւ զվայելուչ հասակն՝ որ ի սրոյ բաժանեցաւ յանողորմ եւ արեանարբու անօրինացն, նոյնպէս եւ զԼեւոնի ահիւ եւ անգոհիւ լինելն ի մէջ այլազգեացն ի ծառայութիւն . զայս ամենայն զմտաւ ածեալ բարեպաշտ թագաւորն Հայոց, այրէր անհնարին կրակով, եւ զալարէր աղիքն յաղագս սիրոյ որդւոցն որ ոչ տեսանէր՝ եւ թաւալէր ընդ երկիր անմխիթար սգով, բայց գաղտ եւ ի ծածուկ»։ Ուրիշ ծեր պատմիչ մայլ ծանօթ Հեթնոյ, իր համաշխարհական պատմութիւնը լմանցընելու ատեն՝ լսելով իր երբեմն հիւրընկալ իշխանագանց սեւ գոյժը, դողդոջուն գըրչովը վերջին թղթոյն վրայ կ'աւելցընէ այս դէպքս այլ .

«Գլուխ եւ խոց անողջանալի կոտորելոցն՝ Թորոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ ի մատաղ հասակի մերձ ի փթիթս մօրուաց . վկայեալ յամենայն բերանոյ՝ անպակաս ի բովանդակ բարոյ, եւ կուսութեամբ շտեմարանեալ ի ծրարս շնորհացն Աստուծոյ, որ յօժարութեամբ եւս դիմեալ ի պսակն արեան . քանզի հարցեալ զո՞վն՝ ոչ ետ զանուն հօրն, զի կենօքն գերեալ՝ մի լիցի աւելի բեռն հօրն եւ աշխարհին, ընդ անդրանիկ եղբօրն՝ Լեւոնի, պսակելոյ եւ հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեանն՝ առ կենօք հօրն։ Քանզի նա եղեւ գլուխ գերելոյն մեր, եւ հուր աղէկէզ լերդաշարշար եւ սրտակտուր աշխարհիս մեր եւ ազգիս, որ կամք շնչարգել եւ յերերման։ Հասանէ՛ ձեռն վերին՝ որ եհարն ցասմամբ, նոյն բժշկէ ողորմութեամբ, ածելով զնեծարաց խոցն, առնելով գերեղարձ՝ (Լեւոնի) զոր տարան ընդ այլսն, հնգետասան օր յամելով յաշխարհին, եւ լնլով աղէտիք . զնոսա իրօք, եւ զմեզ խոցոտիչ համբաւովն»։ Եւ կու վերջացընէ պատմութիւնը յիշելով Կոստանդին ծեր կաթողիկոսին սգաւոր մահը, որ գրեթէ 50 տարի նստաւ յաթոռն, եւ չդիմացաւ Հեթնոյ որդւոց ցաւալից դիպուածին, որոց կնքահայրն այլ էր . «Որ եւ ճաշակեաց իսկ եւ ի թանձրացեալ եւ զմոսեալ վերջնոյ լեղոյս՝ մերձ ի կատար կենացն՝ տեսանաբար զդղրդումն թագաւորութեանն մերոյ, զսուր եւ զգերութիւն իրական ծննդեան եւ սննդեան աշխարհին, մտեալ ի փորձ հնոցի գեհենահոտ հրոյն բորբոքման, ձեռնասուն արքայորդեացն կորստեան, որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա, եւ արարինտագնապել ստիպման շնչոյն, բորբոքելով զծարաւ լուծման յոքնաթախիծ կենցաղոյս։ Չոր տեսեալ Յիսուսին իրոյ եւ Աստուծոյ, ընդՂազարու հանէ արտաքոյ այսքան դժնդակ կրիցս՝ յանպատումն»։

Բայց շեթնոյ դառնակսկիծ ծարաւը չկրցանքոյորովին մարել Ականց անապատին բազմաբուղիս աղբիւրներն . այլ հազիւ գովացած՝ յիշեց միանգամայն թագաւորութիւնը եւ հայրութիւնը, ձեռքը սրտին վրայ դրաւ, եւ հետը բերած թաթար անօգուտ եւ անկիրթ զօրքերը արձրկելով՝ դարձուց աշուրները ի կէս անապատացեալ երկրէն . փութացաւ գնաց առ դանն Ապաղա, պատմեց աշխարհքին եւ սրտին հարուածները . խնդրեց աւելի մեծ գունդ մը զօրաց օգնութեան, հասարակաց թշնամոյն (Եգիպտացոց) վրէժը պահանջելու . բայց դանն իր մերձաւոր թշնամեաց հետ զբաղած՝ այս խնդիրքը անկատար թողուց:

Անկէ անոյս դարձած ատենն էր՝ որ շեթում ուրիշ ճար մը մտածելով կանչեց իշխանները Ջրօրհնեաց տօնին առթիւ . եւ որդոցը յիշատակաւ՝ անոնց սիրտը եւ քիչ մ'այլ խղճերնին ճնկեց . վասն զի բաւական տիրասէր չգտնուեցան թէ պատերազմին ատեն եւ թէ անկէ ետեւ . անոր համար այլ հիմա չէին համարձակեր բան մը խօսիլ, մինչեւ նախ թագաւորն երեսը եւ բերանը բացաւ, եւ իշխանաց եւ վարդապետաց լուռ արտասուացն այլ շնորհակալելով՝ մխիթարեց զանոնք որոցմէ պէտք էր ինքն մխիթարուիլ . զԹորոս Վարդանանց պսակակից սեպելով, զԼեւոն՝ համբերող նախարարացն՝ ի դրան Յազկերտի, եւ աւելի կ'ընտրեմ, կ'ըսէր, ասոնց այսպէս ըլլալն, քան թէ անոնց ազատութեամբ ձեր եւ ձերիններուն կորըստեան պատճառ ըլլալն . ,Ինձ լաւ է Լեւոնի ծառայութիւնն, եւ Թորոս իւր արեամբն ի վերայ քրիստոնէից սպանած, քան ես այս ամեն երկրիս եւ ձեր արեանդ եւ խղճիդ տիրացած»: Այս մեծահոգի խօսքերն սիրտ տուին վարդապետաց եւ իշխանաց՝ փոխադարձ մխիթարութիւն տալու թագաւորին, թէ եւ անոր սուգն դրսէն ցուցածէն հազար անգամ աւելի էր: Եւ այսպէս կէս մխիթարեալ կէս սգահար՝ կատարեցին Յայտնութեան եւ Ջրօրհնեաց հանդէսները, որչափ կարելի էր . եւ դարձան նորէն թագաւորը բարեւելու, եւ մխիթարելու: Ասկէ վստահութիւն առնելով շեթում, յայտնեց բերնով այլ ինչ որ սիրտը կ'աղաղակէր, Լեւոնի ազատութեան հնարքը . դեռ ողջ էր Լեւոն, եւ գերութեան միջէն այլ հաւատարիմ ձեռքով ու զարմանալի սրտապնդութեամբ իմաց կուտար իրեններուն, որ ամուր կենան Եգիպտացոյն դէմ: Իսկ խորագլտն Ֆունտութար ճարտար հաւորսի նման՝ այնպիսի շահաւոր որս մը ողջ կու պահէր, անով իր ուրիշ փափագածները որսալու համար, եւ յետ քիչ մը վախցընելու եւ յանդիմանելու, յիշեցընելով հօրը արհամարհական հրաւերքը՝ որ զինքը ի ծառայութիւն կանչէր, հիմա տեսա՞ր, կ'ըսէր, ո՞վ որո՞ւ եղաւ ծառայ .

հրամեց որ տանին Գահիրէ քաղաքին անուանի Լեռնաբերդին (Քալաա'դել Ճեպել) մէջ բանտեն, բայց առանց շատ նեղելու, ինչուան հրաման այլ տուաւ անոր՝ Երուսաղէմ ուխտի երթալու . եւ երբեմն ազատութիւն այլ կու տար դուրս հանելու զգուշութեամբ: Ահա այս դէպքն է որ այն ժամանակներուն մօտ մեր բանաստեղծից մէկն երգեր է:

Աւա՛ղ ըզԼեռնն ասեմ,

Որ Տաճկաց դուռն ընկել գերի:

Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս,

Սուրբ խաչն օգնական Լեռնիս ու ամենուս,

Սուղանն ի մոյտան ելել

Իր ոսկի գունտն կու խաղայ: Իմ լուս, եւ այլն:

Խաաց ի Լեռնն երեստ .

,Ա՛ն խաղա եւ տուր տատայիդ»:

«Լեռն, դու տաճիկ լինիս,

«Ես ու իմ տատաս քէ գերի»:

Լեռնն ի բերդին նրստել

Դաստառակն աչիցն ու կու լար .

«Քերվա՛նտ՝ որ ի Սիս կ'երթաս՝

«Դուն խապար տանիս պապայիս»:

Ոնց որ պապն ալ գան լըսեց

Շատ հեծել քաշեց երամով .

Եկաւ ի սուղանն ելաւ,

Շատ գետեր եհան արընեց .

Իստ՝ զիր Լեւոն որդին

Ու հասաւ սրբտին մուրատին:

Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս .

Սուրբ խաչն օգնական Լեւոնիս ու ամենուս:

Ազնի՛ւ եւ քաջ երգիչ, կու համարձակիս թագաւորիդ պատերազմաւ շատ արեան գետեր հանել տալ, եւ յափշտակելով որդին՝ հասնիլ սրտին մուրատին . իրաւ այս էր Հեթոյ մտածութիւնն, բայց բաւական ոյժ չունէր այնպիսի թշնամոյ դէմ: Իշխանքն այլ ասոր տեղ խորհրդակից կ'ըլլային՝ որ փրկանք տալով ազատէ գորդին, եւ իրենցմէ բան տալով՝ կ'ուզէին խղճերնին սրբել: Բայց Հեթում երկու նախանձորդաց մէջ էր . մէկ կողմէն Եգիպտացոց, մէկայլ կողմէն Թաթարաց . թշնամութենէն աւելի դժար էր բարեկամութիւնն կամ դաշնադրութիւնն, կամ փրկանք տալն . եւ եթէ այնպէս ազատէր որդին՝ կրնար դարձեալ կորսնցընել բոլոր աշխարհովը՝ Թաթարաց ձեռքով: Նախանձն ի՞նչ չարիք չըներ . Հեթումի քսան տարուան համարձակութիւնն եւ խօսք անցընելն մեծ դանից քով, շատ անհաւատ իշխանաց ծանր եկեր էր, եւ սկսեր էին համբաւել թէ Հեթոյ բարեկամութիւնն կասկածելի է, անիկայ ծածուկ Մսրայ սուղանին դաշնակից է: Այս բանը իմանալով դանին քով գտնուած Մեծ Հայոց ազնիւ ճշմարիտ ազգասէր իշխանք՝ ծածուկ գրերով իմացուցին Հեթոյ . եւ որչափ այլ եղած դիպուածոց համար ցաւակից կ'ըլլային, դեռ կու համարձակէին ըսելու, թէ Սուրբ թագաւոր, աւելի լաւ է մէկ որդւոյդ մահն, եւ միւսոյն գերութիւնն, քան կու եւ բոլոր ազգիդ, եւ զօրօք եւ եկեղեցեօք կոտորած եւ աւերածն . զգոյշ կեցիր, չըլլայ թէ Եգիպտացոյն կէս աւերակ տուն մ'այլ տաս . ապա թէ ոչ՝ անհաւատից խօսքը ճշմարտած կ'երեւիս, աշխարհքդ կու փճացնես, զմեզ այլ ամօթ եւ մահապարտ կ'ընես:

Այսպէս դժուարութեամբք պաշարեալ Հեթում, թէ՛ թագաւորութիւնը կ'ուզէր ապրեցնել եւ թէ որդին . աւելի յայտնի թշնամոյն վրայ վստահացաւ, քան

կասկածոտ բարեկամին Թաթարին . եւ ծածուկ դեսպաններ դրկելով Պիյալարայ՝ հարցուց թէ ի՞նչ կ'ուզէ Լեւոնի ազատութեան փոխարէն: Պիյալարս պահանջեց անոր սիրելւոյն տեղ՝ իր սիրելւոյն ազատութիւնը, այն Կարմիր բազայն՝ որ դեռ Թաթարաց քով էր . երկրորդ, այն բերդերը՝ զոր Թաթարաց օգնութեամբ իրմէ առեր էր շեթում՝ ետ դարձնել: շեթում դարձեալ ծերութիւնը եւ յօգնութիւնը մոռնալով՝ գնաց Ապաղա դանին, եւ գանգատելով Պիյալարս վրայ՝ իմացուց անոր պահանջմունքն . այլ Ապաղա մէկէն յանձն չառաւ թողուլ զՍօնգօրն . բայց շեթում յետ դարձին ի Կիլիկիա՝ եղբօրորդոցը մէկը խարեց առ դանին, եւ վերջապէս բերել տուաւ զանիկայ . որ ինքնին գրեց առ Պիյալարս եւ իմացուց շեթոյն ձեռօք ազատիլն ի Թաթարաց:

Այս ժամանակներս Պիյալարս ելեր եկեր էր Անտիոք պաշարելու եւ քրիստոնէից ձեռքէն առնելու, եւ առաւ այլ: Հոն իմացուց շեթում որ պատրաստ էր խարելու իրեն իր բարեկամը . բայց անոր հետ ուզած բերդերը տալու կու դժարէր: Այն ատեն Պիյալարս իրեն գրեց . «Լաւ մտածէ, թագաւոր, թէ որ դու քու որդիդ եւ թագաժառանգդ ազատելու համար այդչափ կու դժուարիս, միթէ ես այլ չե՞մ կրնար աւելի խստանալ իմ բարեկամիս վրայ, որուն հետ արենակցութիւն այլ չունիմ . ինչ որ կ'ուզես ըրէ Սօնգօրը . բայց գիտցիր որ մեր հաշտութիւնը արող դու կ'ըլլաս, եւ ես ասկէ դառնալուս ատեն՝ կու գամ վրադ»: Այս սպառնալիքէն ետեւ այլ ուշանալու եւ որոշելու բան չէր մնար . շեթում յանձն առաւ պայմանները, եւ Անտիոքայ մէջ դաշնադրութիւն մ'ըրին, եւ երկու կողմէն խարեցին խնդրուածները, հանդերձ ընծայիլք:

Յետ քսան եւ երկու ամսոց դարձաւ գերեալն Լեւոն ի Կիլիկիա, եւ հետը իր հօրեղբօրորդին եւ իրենց ճորտերը: շեթում բոլոր իշխաններովն եւ աշխարհագումար հանդիսի՝ օրով ճամբայ ընդ առաջ գնաց որդւոյն, որ անկէ ետեւ իրեն քանի մը որդիէ աւելի կ'արժէր: Արդեօք ծեր նահապետին Յակովբայ՝ Յովսեփայ ողջ ըլլալն լսելով Եգիպտոս երթալ եւ ուրախանա՞լն, թէ շեթոյն իր Եգիպտոսէ եւ նոյն իսկ Յովսեփայ դրուած բանտէն՝ ելած եկած որդւոյն տեսութեամբ՝ փոխադարձ ուրախութիւնն աւելի՞ էր . ես չեմ գիտեր, եւ ոչ որ գիտէ . եւ ոչգ իսկ այն իրարու պլլուած երկու սրտերն, որ կու զգան եւ չափը չեն գիտեր: ... Երբ մտան ի Տարսոն թագաւորական քաղաքն, ամեն կողմէն ժողոված վանականք եւ աշխարհականք եկան յուրախակցութիւն . եւ երբ մտան

յարքունիս, առաջին հանդիպողն եղաւ անշուշտ ծաղկահասակ պարկեշտ կին մը՝ ընծայելով իր հետ ի համբոյր Լեւոնի՝ իրենց բազմապտուղ սիրոյն երկու նախընծայ երախայրիքը՝ հեզանագիկ Չապլունը, եւ թագի պայագատ 3 4 ամեայ շեթմիկը, զոր այն սեւ պատերագմէն քիչ առաջ ի լոյս ընծայեր էր մայրն, Կեռան, տիկնաց տիկին դուստր իշխանին Լամբրոնի:

Այսպէս շեթում հասնելով ըստ երգչին՝ սրտին մուրատին, տարիներով փափագած ուրիշ մէկ կամքն այլ ուզեց կատարել, 45 տարի գլուխը ծանրացած թագը՝ դնել ի գլուխ Լեւոնի, եւ երթալ հանգչիլ յաւիտենականութեան նախափունքը, միայնաբան մը: Լեւոն հրաժարեցաւ լալով, աղաչեց զհայրը, որ չստիպէ զինքն իր կենդանութեան ատեն անոր աթոռը նստիլ . բայց հօրը յօգնութիւնն եւ ներքին փափագն ասելի ստիպողական էր . անշուշտ հեռուէն ձայն մ'այլ կու լսէր սա փութալու, զոր ուրիշներն չէին հասկընար:

Յաջորդ տարին դարձեալ եւ վերջին անգամ երկայն ճանապարհորդութիւն մըրաւ առ դանն Ապաղա, նա շնորհակալելով Լեւոնի ազատութեան պատճառ ըլլալուն . եւ երկրորդ իր հրաժարելու եւ անոր թագաւորութեան հրաման եւ հրովարտակ ուզելով . զոր եւ առաւ, փութացաւ եկաւ յարքունիս, ժողով ըրաւ եւ կամայ ակամայ բռնադատեց զԼեւոն յանձն առնուլ իշխանութիւնը, եթէ եւ իր թողած թագը դնել չէր ուզեր իր կենդանութեան ատեն: Ծիրանեաց ու բեհեզին հետ թօթուելով ամեն աշխարհական հոգ եւ մտածմունք, անկէ ետեւ վանքեր եւ անապատներ կու պտըտէր, երկրորդ եւ անանց թագաւորութեան մը պատրաստելու . որոյ համար ճգնողական զգեստով այլ զարդարուած եւ անունը Մակար դրած, կու սպասէր հանդերձեալ հրաւիրակին, որ եւ չուշացաւ . վերք մը փութացուց գմահը (28 հոկտ . 1270) եւ հասուց զինքը իր փափագած եւ անխտով հանգըստեանը . թողով զմարմինն իր սիրելի Դրագարկ վանաց մէջ՝ սիրելագոյն անձին քով, իր սրբակենցաղ կենակցին Չապել թագուհոյն, որ իբրեւ քսան տարի իրմէ առաջ հոն արդարոց քունը կու վայելէր:

Լեւոն Բ յետ երկայն եւ ծանր սգոյ, աղաչելով եւ ստիպուելով իր բոլոր աշխարհքէն եւ յօտար թագաւորաց եւ դրացեաց, հագիւ յանձն առաւ հօրը թագն ի գլուխ դնել, եւ անոր նման պէսպէս դիպուածներու եւ կրից մէջ թագաւորելով, նոյնպէս սիրելի եղաւ ազգին եւ պատուելի օտարաց . մասնաւոր փոյթ եւ սէր

ունելով եկեղեցեաց եւ վանաց եւ գրագիտաց, որոց առատապէս նուէրք կու տար, որ իր երկրին մէջ միայն, այլ եւ ի Մեծ Հայս եւ ի գաղթականս յԻտալիա . ուր եւ Բերուճիա քաղաքին Հայոց եկեղեցոյն նուիրած ճաշոց գիրքը, իր ընծայագրովը կայ մինչեւ ցայժմ:

Լեւոնի թագաւորութեանը հինգերորդ տարին՝ իր գերող Եգիպտացոց հետ պատերազմելով եւ վռնտելով, վերջապէս յաղթական պատերազմէն դարձած՝ իրմէ երիտասարդ ձիւն վիրաւորուելով, մեծաւ փառօք մեռաւ ծերունի սպարապետն՝ հօրեղբայր թագաւորին՝ Սմբատ (1276), յետ մահուան ամենայն համամայր եղբարցն, որոց անդրանիկն էր: Իսկ Լեւոն յետ քսանամեայ թագաւորութեան վախճանեցաւ (ի 6 փետր . 1289), որոյ քաղաքավարութեան ամենայն դիպուածները պատմելու համար՝ ինչուան ի լոյս հսկելն այլ չիբաւեր: ... Բայց արդէն մեր հսկման կանթեղիկն կու կածկըտայ, եւ կրակարանս ի մոխիր կու դառնայ: Գիշե՛ր բարի: ...